www.acrpc.am

# Իրավական մշակույթ

Ձկա Հասարակություն առանց իրավունքի

Ubi societas ibi jus

երկշաբաթաթերթ
թիվ 15 (18)
2007 թ. նոյեմբերի 30

## Կյանքի ճշմարիտ ընթացքը

«Տեսէք եւ զգոյշ կացէք ամէն տեսակ ագահութիւնից» (Ղուկ.12:15): Այս խոսքերն ասելով՝ Ղուկաս ավետարանիչը ներկայացնում է, թե ինչպես Քրիստոսին մոտեցան երկու եղբայրներ և ասացին. «Վարդապե՛տ, ասա՛ եղբորս, որ ժառանգությունն ինձ հետ բաժանի»: Մեր Տերն, այս իսկ նկատի ունենալով, զգուշացրեց նրանց ագահությունից՝ ասելով՝ տեսե՛ք, զգուշ եղեք ագահությունից, որովհետև մարդու կյանքն ու ուրախությունն իր կուտակածի մեջ չեն, մարդու հարստությունն իր կուտակածի մեջ չէ, և հարստությունն ունեցվածքով չի չափվում: Հիրավի, Ավետարանի բարձրագույն գաղափարն առավելաբար հենց այս է:

Բոլորս գիտենք, որ ագահությունը լավ բան չէ, բայց բոլո՛ր ենք տարված ագահությամբ: Գիտենք, որ ագահ մարդը բարիք չի կարող գործել, բայց յուրաքանչյուրիս մեջ ագահություն կա, և ագահությունն առավելաբար դրսևորվում է ունեցվածքի ձգտումով: Այն կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Չունևոր մարդն անգամ ցնցոտիների մեջ կարող է խիստ ագահ լինել, նախանձոտ, հպարտ՝ մեղքերի բազում շտեմարաններ ու խոցեր ստեղծելով իր մեջ: Ուստի մեր Տերը, շարունակելով խոսքը, զգուշացնում է իր աշակերտներին՝ թե՝ տեսե՛ք, առավելը հոգին է, ոչ թե կերակուրը, առավելը մարմինն է, ոչ թե հագուստը: Տերը բացահայտում է կյանքի իրական արժեքները, որպեսզի ամեն մեկս ճիշտ իմանանք՝ ինչպե՞ս ապրել, ո՞րն է կյանքում կարևորը: Երբ ունեցվածք կա, ինչպե՞ս օգտագործել այն, որպեսզի առավել ճշմարիտ լինի մեր կյանքի ընթացքը, նրա ամեն մի վայրկյանը, որպեսզի ագահությունը՝ այդ մահացու մեղքը, բազմատեսակ նորանոր մեղքեր չբխեցնի մեր մեջ: Դրա համար է Պողոս առաքյալն ագահությունն անվանում «կռապաշտության մայր», որովհետև կուռքերի պաշտամունքն սկիզբ է առնում է հենց ագահության դրսևորումից: Մեր Տերը՝ Քրիստոս, այդ երևույթը երկու երիտասարդներին պարզաբանում է մի առակ պատմելով:

Տերը պատմում և ցույց է տալիս, որ մարդու իսկական հարստությունն իր կուտակած գումարը կամ ունեցվածքը չէ: Պատմելով առակը՝ խրատում է նրանց, որ ագահությունից հեռու մնան, որովհետև տեսնում է, որ նրանք ժառանգությունը բաժանելու կռիվ ունեն՝ ոչ թե արդար բաժանելու, այլ ավելին ձեռք բերելու համար: Ուստի պատմեց.

«Մի մարդ կար: Հարուստ էր և ուներ այգիներ, մեծ հարստություն: Մի տարի բերքը հարուստ էր. շվարած մտածում է՝ ինչպես անի, որ ամբողջ բերքը տեղավորի: Հանկարծ ասում է. «Գիտեմ՝ ինչ պիտի անեմ. կքանդեմ ամբարներս, ավելի մեծերը կսարքեմ, ամբողջ բերքը նրանց մեջ կկուտակեմ ու իմ անձին կասեմ, ով անձ, քեզ համար օրերդ հանգիստ անցկացրու. երկար տարիների ունեցվածք ունես վայելելու»: Եվ ավելացրեց. «Աստված նայեց այս մարդուն ու ասաց. «Անմի՛տ, այս գիշեր քեզանից պահանջելու եմ հոգիդ, ու՞մ ես թողնելու այս ամենը»: Այնուհետև Տերն ամփոփում է առակի իմաստը. «Նախ և առաջ Աստծո՛վ հարստացեք: Կործանումն է ամեն մեկի վերջը, ով առավել ունեցվածքով կհարստանա, քան Աստծով»:

Ապա ավելացնում է, որ, իսկապես, հոգին է կարևոր, ոչ թե կերակուրը: Ո՞վ չգիտի, որ մարդ արարածը կերակրով է ապրում, ո՞վ չգիտի, որ կերակուրն անհրաժեշտ է մարդուն գոյատևելու, ապրելու համար: Բայց երբ կերակուրը կյանքի նպատակ է դառնում, ահա այսպիսի վախճան է ունենում մարդը՝ կորցնելով հոգին: Տերը ցույց է տալիս, թե ինչն է հիմնական արժեքը, ի՞նչ է նշանակում Աստծով հարստանալ: Եթե գան մարմինդ պահանջելու, և դու կարող ես հագուստդ տալով ազատվել, արդյո՞ք կխնայես հագուստդ և մարմինդ կորստյա՞ն կմատնես: Ոչ ոք այդպես չի՝ վարվի: Մարդու համար կարևորը մարմինը պահպանելն է, ոչ թե հագուստը:

Այդպես էլ կերակուրն առավել է, քան հոգին: Ամենքս կյանքում տառապում ենք, տանջվում, չարչարվում հանուն մի քանի լումայի՝ առանց գիտակցելու, որ դա մեզ համար դարձել է կռապաշտություն, մոլուցք: Մոռացել ենք Աստծու՝ Նրա՛ն, ով տվիչն է կյանքի, ով աղբյուրն է բարիքների: Կյանքն ավելի ենք արժևորում, քանզի Աստծո տվածն է: Բայց և Աստված մարդուն տվել է հոգի, որ հավիտենական է, ուրեմն՝ ավելին արժե, քան մարմինը: Տերն ասում է. «Ի՞նչ կշահի մարդ, եթե այս աշխարհում ամեն ինչ ձեռք բերի, բայց կորցնի իր հոգին»: Հոգի՛ն. այս է մարդու համար մնայուն, իսկական արժեքը:

Դե, տե՛ս, ո՛վ մարդ, ո՛վ անմիտ, ու գնահատի՛ր, թե պիտի քանդե՞ս ամբարներդ, թե պիտի քո անձին ասե՞ս՝ հանգիստ կե՛ր ու խմի՛ր, վայելի՛ր կյանքը: Կարո՞ղ ես քո ունեցվածքով մեկ կանգուն ավելացնել քո հասակին: Իհարկե, չես կարող: Ուրեմն՝ քո ագահությունը քեզ չկարողացավ օգնել: Որքան էլ չարչարվենք, մեր հասակը չենք կարող ավելացնել, մեր վաղվա օրը չենք կարող ինքներս ստեղծել: Առակաց գիրքն ասում է՝ երբեք մի՝ ասա՝ վաղը կանեմ, որովհետև չգիտես՝ վաղը քեզ համար ինչ կբերի: Եվ օրինակ է բերում. տեսե՛ք, ասում է, ագռավներին, որ ո՛չ հնձում են, ո՛չ ցանում են, ո՛չ կուտակում են, սակայն Աստված անընդհատ կերակրում է նրանց: Տեսե՛ք շուշաններին. Սողոմոն թագավորն իր թագավորության ժամանակ այնքան գեղեցիկ չհագնվեց, որքան Աստված նրանց այդպես զարդարեց, սակայն նրանք ո՛չ չարչարվում են, ո՛չ էլ հնձում ու կալսում: Աստված նրանց այսպիսին է արարել: Տերն այդպես պահպանում է խոտերն ու կենդանիներին, որ այնքան արժեք չունեն, որքան դուք, թերահավատնե՛ր:

Արժեքները հասկանալու և չհասկանալու բանալին մեր հավատքի մեջ է: Որքան թերահավատ ենք, այնքան արժեզրկում ենք զանազան արժեքներ, որքան անհույս ենք, այնքան արժեքները մեզ համար անարժեք են: Ագահությունը գլուխ է բարձրացնում՝ խորտակելով արժեքները:

Մարմինն արժեք է, սակայն նրա համար, որ հոգին փառավորվի, որն ավելի մեծարժեք է, և հոգին փառավորվելով՝ Աստված է փառավորվում, որն էլ արժեքների գագաթն է: Մարմինն արժեք է ոչ թե նրա համար, որ ագահությունից դրդված միայն կերակրենք, սնենք ու հագցնենք նրան ու միայն դրանով ապրենք, այլ արժեք է նրա համար, որ Աստծո հոգին է նրանում բնակվում, և հոգին էլ առավել արժեք է մարմնի հանդեպ, որովհետև մարմինն օրերից մի օր վերջ է ունենում, իսկ հոգին հարատև է:

Աստծով ապրելով, Աստծո խոսքը մեզ համար կենարար աղբյուր ունենալով՝ շարունակենք բարեպաշտ կյանքով ապրել, որպեսզի Աստված մեր հոգիներն էլ ավելի լցնի շնորհներով և պարգևի առավելը՝ հավիտենական կյանքը, որի համար ջանք ու եռանդ պիտի չխնայենք թե՛ մարմնով, թե՛ հավատքով:

Թող Տիրոջ սուրբ հոգին առաջնորդի ամենքին՝ իմացություն պարգևելու համար, որպեսզի առավել տոգորուն լինենք իր խոսքերի մեջ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեսանդ, ամեն:

Տեր ՎԱՀԱՆ քահանա ԱԶԱՐՅԱՆ
Վանաձորի Սբ. Գր. Նարեկացի
առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ

## ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆ

**Մարդուն տված է գործել, աշխարհիս բարիքը վայելելու, երջանիկ կյանք անցնելու համար քրտինք թափել, տքնիլ, գլուխը վտանգի ենթարկել, բայց արդարությունն դեմ չմեղանչել, ուրիշի ունեցածը անուղղակի միջոցներով չհափշտակել, ծուռն ու պարսավելի ճանապարհով արծաթի ու փառքի համար անձնուրաց և ընկերադավ չլինել. այս բաները ներելի չեն հոգեկան և մտավոր արարածին:**

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում — էջ 2
Ընկերվարութեան գնահատման ծալքերը — էջ 3
Մեր երեխաները կվայելե՞ն երկիրը, թե՞ կդառնան էկոլոգիական փախստականներ — էջ 4
«Ոչ միայն հացիվ...» — էջ 5
20-րդ դարի «երգեցիկ եղեգը» — էջ 6
Լեռնամարտ — էջ 6
Մատաղի խորհուրդն ու կարգը — էջ 7
Ընթերցողների հարցերին պատասխանում են... — էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ — էջ 8

# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

ՄԵՔԵՎ

## Ի պաշտպանություն կանանց իրավունքների

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար L. Արբորի խոսքը նոյեմբերի 25-ի՝ կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման միջազգային օրվա առթիվ

Աշխարհի գրեթե բոլոր կողմերում ամեն օր բազմաթիվ կանայք և աղջիկներ են սպանվում, հաշմվում, խոշտանգումների ենթարկվում, բռնաբարվում, վաճառվում սեռական ստրկության: Բռնությունների զոհերը գրեթե հույս չունեն, որ հանցագործները պատասխանատվության կենթարկվեն կատարած հանցանքների համար:

Անպատժելիությունը խորանում է խտրականության և անհավասարության հիմքի վրա: Պետություններն ընդունել են Մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերը, որպեսզի կանխարգելեն և դատապարտեն կանանց նկատմամբ խտրականությունն ու հանցագործությունը: Բայց քանի դեռ չի վերացվել անհավասարությունը, այդ թվում՝ տնտեսական և սոցիալական ոլորտներում, բռնության դրսևորումները չեն նվազի: Կնոջ համար գերադասելի է հաշտվել ընտանեկան բռնության պայմանների հետ, քան ընտրել տնանկությունն իր և իր երեխաների համար. նա չի հայտնի բռնաբարության մասին, եթե մենք շարունակենք հանցագործի փոխարեն նշավակել բռնության զոհին:

Միջազգային իրավունքը պետություններից պահանջում է ընդունել գործուն օրենսդրական և վարչական ընթացակարգեր, որոնք արդարությունը վերականգնելու, արագորեն միջամտելու հնարավորություն կտան:

Կանանց նկատմամբ բռնությունների կանխման ջանքերն ուղղված են նաև տնտեսական և սոցիալական իրավունքների հավասարության ապահովմանը:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման միջազգային օրը և յուրաքանչյուր օր մենք պետք է պահանջենք պետություններից իրականացնել իրենց հանձնառությունները՝ մեղավորներին արդարադատության առջև կանգնեցնելով և նրանց զոհերի համար արժանի փոխհատուցում ապահովելով: Այլ կերպ ասած՝ պետք է պահանջենք, որ մարդկության կեսից ավելին լինի պաշտպանված. կանայք ունեն դրա իրավունքը:

ԹՈՒՐՔԻԱ

## Մարդու իրավունքների բարեփոխումներ Թուրքիայում

2007 թ.-ի նոյեմբերի 21-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորված «Աջակցություն Թուրքիայում մարդու իրավունքների բարեփոխումների իրականացմանը» ծրագիրը եզրափակվեց «Որտե՞ղ են մարդու իրավունքները» խորագիրը կրող ցուցահանդեսով: Ծրագրի նպատակն էր՝ երաշխավորել Թուրքիայի քաղաքացիների և ընդհանուր առմամբ քաղաքացիական հասարակության իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանություն:

Ծրագրում ընդգրկված կառույցները՝ Եվրոպայի խորհուրդը, Արդարադատության նախարարությունը, Ներքին գործերի նախարարությունը և Մարդու իրավունքների խորհուրդներն իրականացրել են դատավորների, դատախազների, ոստիկանության և այլ կառույցների աշխատակիցների վերապատրաստում՝ մարդու իրավունքների տարբեր թեմաների շուրջ, այդ թվում խոսքի ազատություն, կյանքի իրավունք, խոշտանգումների կանխարգելում և այլն:

Ցուցահանդեսին ներկայացված պաստառներն ընտրվել էին Ազգային պաստառի նախագծերի մրցույթին ներկայացված 100 աշխատանքներից: Ցուցահանդեսը կազմակերպվել էր որպես հանրային հարաբերությունների քարոզարշավ՝ միտված մարդու իրավունքների գաղափարների, Մարդու իրավունքների նախագահության մանդատի, ինչպես նաև Մարդու իրավունքների 931 խորհուրդների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

## Իսրայելը խոչընդոտում է ուսանողների կրթությանը

Իսրայելի կառավարությունն արգելել է Գազայի գոտում գտնվող 670 ուսանողների ելքը, որոնց անհրաժեշտ է բարձրագույն կրթությունը շարունակել այլ երկրներում, ինչպես օրինակ Եգիպտոսում, Հորդանանում, Գերմանիայում, Բրիտանիայում և Միացյալ Նահանգներում: Նրանցից շատերն ուսումը սկսել են նախորդ տարիներին և ամառային արձակուրդներին տուն վերադառնալուց հետո հայտնվել Գազայի «ծուղակում»:

Գազայի գոտին գրեթե ամբողջությամբ Իսրայելի հսկողության տակ է, և հունիսից սկսած՝ միայն ծայրահեղ բուժօգնության կարիք ունեցողները, որոշ լրագրողներ և միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ են կարողացել լքել այն:

Ուսանողների հանդեպ նման սահմանափակումները խախտում են 1992 թ.-ին Իսրայելի կողմից ստորագրված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածով սահմանված կրթության և, իհարկե, ազատ տեղաշարժման մարդկային անկապտելի իրավունքները:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

## Նշանակվել է Երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցիչ

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի որոշմամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ է նշանակվել Երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման հարցերով, ինչը ողջունելի քայլ է՝ համաշխարհային այս խնդրի լուծման ուղղությամբ: Որոշումն ընդունվել է 176 կողմ և 1 դեմ (ԱՄՆ) ձայների հարաբերակցությամբ:

Անցյալ տարի երեխաների նկատմամբ բռնությունների դեպքերի վերաբերյալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կատարած ուսումնասիրությունը բացահայտել է աշխարհում երեխաների նկատմամբ բռնությունների ապշեցուցիչ ծավալները, ինչպես նաև դրանց կործանարար ներգործությունը ընտանիքների, համայնքների և հասարակության վրա:

Հատուկ ներկայացուցիչ նշանակելու խնդրագիրը ստորագրել էին աշխարհի ավելի քան 1000 ոչ կառավարական կազմակերպություններ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

## Հարձակում իրավապաշտպանի և լրագրողների վրա

Նոյեմբերի 23-ին «Հուշամատյան» ռուսական առաջատար իրավապաշտպան կազմակերպության ղեկավարն ու ՌԵՆ ԹԻ-ՎԻ հեռուստաալիքի երեք լրագրողներ առևանգվել են Նազրանիի (Ինգուշեթիա) հյուրանոցից ու դաժան ծեծի ենթարկվել: Նրանցից բռնագրավել են իրերը, այդ թվում՝ դյուրակիր համակարգիչները, բջջային հեռախոսները, հագուստը և դրամը: Վերջիններս ժամանել էին Նազրանի, որպեսզի լուսաբանեն հրավիրված բողոքի հանրահավաքը՝ ուղղված սպանությունների, առևանգումների և անհետացումների ալիքը սանձելու իշխանությունների անկարողության դեմ: Ոստիկանության աշխատակիցները ցրել են հանրահավաքը ուժի գործադրմամբ:

Ձերբակալված առևանգիչները հայտարարել են, թե իրավապաշտպանը և լրագրողները կասկածվում էին ապօրինի պայթուցիկ նյութ պահելու մեջ: Նրանց տարել են Չեչնիայի սահմանին մոտ գտնվող մի դաշտավայր, դաժան ծեծի ենթարկել և սպառնալով գնդակահարությամբ՝ կարգադրել հեռանալ Ինգուշեթիայից: Ստացած վնասվածքների պատճառով երկու լրագրողներ բուժօգնության կարիք ունեն:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

## Նախկին անչափահաս զինվորը՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի դեսպանորդ

Նոյեմբերի 20-ին՝ Երեխաների համաշխարհային օրվա առթիվ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի նյույորքյան գրասենյակում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ընթացքում պատերազմների հետևանքով տուժած երեխաների հարցերով Մանկական հիմնադրամի դեսպանորդ նշանակվեց Իշմայիլ Բեան: Վերջինս նախկին «անչափահաս զինվոր» է, այժմ՝ երիտասարդ ակտիվիստ և աշխարհում հայտնի որպես «Անցած երկար ճանապարհը» գրքի հեղինակ:

13 տարեկանում Բեան հարկադրաբար մասնակցել է հայրենի Սիեռա Լեոնեում տեղի ունեցած զինված բախումներին: Միայն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աշխատակիցների ջանքերի, մասնավորապես զինված խմբերի առաջնորդների հետ վարած բանակցությունների շնորհիվ են մանկահասակ զինվորները, այդ թվում՝ Իշմայիլ Բեան, ազատ արձակվել:

ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐ

Դեկտեմբերի 1 - ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օր
Դեկտեմբերի 2 - Ստրկության վերացման միջազգային օր
Դեկտեմբերի 3 - Հաշմանդամների միջազգային օր
Դեկտեմբերի 10 - Մարդու իրավունքների օր

ՆՅՈՒ ՅՈՐՔ

## Երեխաների միջազգային օրը

1954 թ. ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը աշխարհի բոլոր երկրներին կոչ արեց նշել Երեխաների համաշխարհային օրը: Հինգ տարի անց՝ 1959 թ. նոյեմբերի 20-ին, ընդունվեց Երեխայի իրավունքների հռչակագիրը, 1989 թ. նոյեմբերի 20-ին՝ Երեխայի իրավունքների միջազգային համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 1990 թ.-ին: Համաձայնագրին մասնակցում են ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները՝ բացի ԱՄՆ-ից և Սոմալիից:

ՄԱԿ-ի ստեղծման օրվանից երեխաները, նրանց բարեկեցությունն ու իրավունքները մշտապես եղել են կազմակերպության հատուկ ուշադրության և աջակցության առարկա:

20-րդ դարի 60-ական թթ. մինչև հինգ տարեկան երեխաներից գրեթե յուրաքանչյուր հինգերորդը մահանում էր: Այժմ մանկական մահացության ցուցանիշները երեք անգամ կրճատվել են, սակայն ամեն տարի մինչև հինգ տարեկան շուրջ 10.6 մլն երեխաներ են դեռևս մահանում:

2000 թ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և միջազգային հանրությունը նոր հազարամյակի նախաշեմին նպատակադրվեցին մինչև 2015 թ. մանկական մահացության գործակիցը 1990 թ.-ի համեմատ կրճատել երկու երրորդով: Սա առաջին հերթին պայմանավորված է երեխաների սնուցմամբ, բժշկական պատշաճ խնամքով, վարակիչ կանխարգելելի հիվանդությունների դեմ ժամանակին պատվաստումներով:

## Հանդուրժողականության միջազգային օրը

Նոյեմբերի 16-ին նշվել է Հանդուրժողականության միջազգային օրը, որի առթիվ իր ուղերձում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունն առանձնահատուկ ուշադրությամբ է անդրադարձել մարդկությանն սպառնացող լուրջ վտանգներին՝ շեշտելով, որ դրանք հնարավոր է կանխել մշակութային բազմազանության զարգացման և հանդուրժողականության խրախուսման շնորհիվ:

Պան Գի Մունը նշել է, որ պատերազմները, ահաբեկչությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, էթնիկ զտումները և մարդկության դեմ ուղղված այլ չարագործություններ խաթարում են ժամանակակից աշխարհը: Նա հայտնել է, որ համընդհանրացումն ինքնին, միավորելով աշխարհը, կարող է նաև վախի մթնոլորտի հաստատման և մարդկանց ներամփոփման պատճառ դառնալ: Երկրագնդի կյանքին սպառնացող լուրջ վտանգների աճին զուգահեռ աճում է նաև անհանդուրժողականությունը:

«Մենք գիտենք ինչ հակադրել այդ վտանգներին: Գիտենք, որ լավագույն զենքերը մշակութային բազմազանությունն ու հանդուրժողականության ձևավորման ու զարգացման ուղղությամբ ջանքերն են»,- ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը: Նրա կարծիքով՝ հաջողության ամենահուսալի երաշխիքներից է ամուր քաղաքացիական հասարակությունը, որը նեցուկ է Մարդու իրավունքների պաշտպանությանը:

## «Մեր երեխաները կվայելե՞ն երկիրը, թե՞ կդառնան էկոլոգիական փախստականներ»

Հարցազրույց «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիայի նախագահ, աշխարհագրական գիտությունների դոկտոր ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հետ

Լուսինե Մացակյան – Տիկին Դանիելյան, Ձեր կազմակերպությունը կոչվում է «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիա: Որո՞նք են կայուն զարգացման նախապայմանները:

Կարինե Դանիելյան - Դա հիմնականում ներդաշնակ, հավասարակշիռ զարգացումն է, երբ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական ոլորտները ներդաշնակ են զարգանում ու դրանով հարատև զարգացում ապահովում: Հիմնականը երկի քաղաքական կամքի առկայությունն է, մեխանիզմները, որոնք պետք է գործեն:

L. Մ. - Այսօր միջազգային հանրության առջև ծառացել են լուրջ և հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Թերևս կարևորներից մեկը, եթե չասենք ամենակարևորը, համընդհանուր տաքացումն է: Ի՞նչ քայլեր է ձեռնարկում միջազգային հանրությունն այս խնդիրը հաղթահարելու ուղղությամբ:

Կ. Դ. – Իրոք, մոլորակը մեզ ժամանակ չի տալիս այլևս մտորելու: Խնդիրը ոչ միայն գլոբալ տաքացման և կլիմայի փոփոխության մեջ է, այլև մի շատ ճիշտ ձևակերպում կա, որ բնությունը կարծես ցնորվել է: Մենք տեսնում ենք, որ երկրագնդի մի մասում այնքան չորային եղանակ է, որ հրդեհներ են բռնկվում, մի ուրիշ մասում հեղեղներ են, անձրևներ, ու ձյուն է գալիս, տեսնում ենք, որ ցունամիները, երկրաշարժերը գնալով սաստկանում են, այսինքն՝ մոլորակն ակնհայտորեն պատասխանում է մարդկությանը նրա անհեռատես քաղաքականության համար: Ճիշտ է, կան միջազգային համաձայնագրեր, որոնք փորձում են այդ բոլոր խնդիրները կարգավորել՝ կլիմայի փոփոխության համաձայնագիրը, անապատացման դեմ պայքարի համաձայնագիրը, կենսաբազմազանության համաձայնագիրը, որոնք սերտորեն փոխկապված են. եթե մենք անտառները ոչնչացնում ենք, կլիմայի փոփոխությանն ավելի ենք նպաստում, և ընդհակառակը:

էջ 4

# ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԼՔԵՐԸ

Պատասխան Լոսանճելիսի «ՄԱՍԻՍ» շաբաթաթերթի խմբագրութեան

Ընկերվարական վարդապետութիւնը հին պատմութիւն ունի: Մի շարք հեղինակներ դրա սկզբնաւորումը տեսնում են Ք. ա. 5-րդ դարի հեղինակ Պղատոնի «Օրէնք» կամ «Հանրապետութիւն» աշխատութեան էջերում: Ուրիշներ այն որոնում են մեր Տէր Քրիստոս Յիսուսի պատգամներում:

15-րդ դարից սկսեցին հանդէս գալ ուտոպիական, աւատատիրական, կրօնական, մանր բուրժուական սոցիալիստները: Մարքսն ու Էնգելսը նրանց անուանեցին ոչ-գիտական վարդապետութեան ներկայացուցիչներ՝ իրենց հոչակելով գիտական ընկերվարութեան հիմնադիրներ: Առաջացաւ սոցիալ-դեմոկրատական հոսանքն իր տարբեր ճիւղաւորումներով: Ծնուեց երկրորդ ընկերվարական խմբաւորումը, որին դաւաճանութեան մէջ մեղադրելով՝ Լենինն ստեղծեց երրորդ ընկերվարականը, որի հիմքը համարուեց լենինեան ընկերվարութիւնը, իսկ պաշտպան ոյժը՝ Խորհրդային Միութիւնը:

20-րդ դարի սկզբում ձեւաւորուեց ազգային սոցիալիզմը, իսկ երրորդ քառորդում ճիւղաւորուեցին ֆրանսական, իտալական, անգլիական, հունգարական, լեհական, չեխական, հարաւսլաւական ու չինական ընկերվարական դպրոցները: Բոլոր ընկերվարականներին բնորոշ էր հասարակական բարիքի արդար բաժանման եղանակների որոնումն ու խոշոր դրամատիրութեան վերացումը: Առաւել արմատական ընկերվարականները պահանջում էին բոլոր տեսակի դրամատիրութեան ու մասնաւոր սեփականութեան ի սպառ վերացումը եւ պրոլետարական տիկտատուրայի հաստատումը՝ որպէս ընկերվարական (խորհրդային) իշխանութեան ապահովութեան երաշխիք ու ընկերվարական ու համայնավարական իրականարգի կառուցման միջոց: Առաջին հարցը, որ բարձրանում է յունիս 24, 2006 թուի «Մասիս» շաբաթաթերթում տպագրուած իմ յօդուածի («Մտորումներ ՀԲԸՄ-ի 100-ամեակի») առթիւ խմբագրութեան գրած դիտողութիւնը կարդալիս, այն է, թէ խմբագրութիւնը ո՞ր մի ընկերվարութեան դիրքերից ելնելով է գնահատում խորհրդային ընկերվարութիւնը եւ քննադատում Վարդգէս Համազասպեանին: Այնտեղ նկատելի է հայ հայրենասէրի լոկ դրական զգացումների արտացոլումը ի տես Խորհրդային Հայաստանի դրական նուաճումների: Բայց հարցն ամէնեւին էլ այդ մասին չէր:

Հարցն այն մասին է, որ հայ ազգային կապիտալը, կուտակուած լինելով արտերկրում, վերջինիս սոցիալիստականացման հետեւանքով ազգայնացւում է ոչ հայկական պետականութեան կողմից եւ այդպիսով դադարում հայ իրականութեան մէջ իր նախկին դերը կատարել: Այսպէս: Բաքուի քարիւղի խոշորագոյն հայ արտադրողների ունեցուածքն ազգայնանալով դարձաւ ատրպէյճանական (Խորհրդային Ատրպէյճանի): Մանթաշեաններն այլեւս անկարող էին օգնել հայ եկեղեցուն, հայ մշակութային եւ կրթական կազմակերպութիւններին: Դրանք չկարողացան նպաստել Կոմիտասի նման տաղանդների պատրաստման: Աւելին: Բաքուի քարիւղն այսօր դառնում է հակահայկական գործօն: Նոյն տրամաբանութեամբ՝ Պորթուգալական ընկերվարական յեղափոխութեան ճանապարհով հայ կապիտալն ազգայնանալով կը կորցնէր իր ազգային պատկանելութիւնը, եւ Կիւլպէնկեան հաստատութիւնը կը դառնար զուտ պորթուգալական: Հետեւաբար, Համազասպեանը չէր ողջունում ընկերվարական յեղափոխութիւնն այդ երկրում: Այլ տրամաբանութեամբ զարգացաւ Հայաստանում հայ եւ օտար կապիտալի ազգայնացումը: Այսպէս օրինակ՝ Շուստովի կոնեակի գործարանի ազգայնացումը նպաստեց, որ Հայաստանում ստեղծուի հայկական կոնեակի դպրոցը:

Դժբախտաբար, անհեռատեսօրէն ազգային հպարտութեան այդ կենտրոնը վերջերս վաճառուեց ֆրանսացիներին: Վլավերտու ֆրանսական պղինձի գործարանի ազգայնացումը նպաստեց հայ նոր մետաղամշակման արդիւաբերութեան ծաղկման: Այսօր Հայաստանում նկատելի է ազգային հարստութեան ոչ թէ սեփականացում, այլ օտարացում:

Իրաւ, հայրենասէր մտաւորականները գիտակցում էին, որ պատմական Հայաստանի լոկ մէկ տասներորդ մասն է հնարաւոր եղել փրկել որպէս Խորհրդային Հայաստան: Նրանք ամէն կերպ ձգտել են այն պահել, զարգացնել՝ միշտ յուսալով, որ անպայման կգայ արդարութեան ու յաղթանակի օրը: Վարդգէս Համազասպեանը եղել է այդպիսի հայրենասէրներից մէկը: Նա, ըստ ժամանակի ու պայմանների ընձեռած հնարաւորութիւնների, միջոցներ է որոնել՝ սատարելու համար հայեցի դաստիարակութեան, հայ գրականութեան զարգացման, ազգահաւաքին, Սփիւռք - Հայաստան միասնութեան ամրապնդման: Բայց նա երբեք չի մոռացել, թէ ինչպէս են պոլշեւիկները նպաստել Աթաթիւրքի Թուրքիայի յաղթանակին, Հայաստանի Հանրապետութեան մեկուսացման, Արցախի ատրպէյճանացման, հայ մտաւորականութեան սերունդի ոչնչացման, հայ պահանջատիրական ոգու մահացման ու հայերի ցեղասպանութեան ուրացման: Այսպիսի կշռադատուած մօտեցումն այն հիմքը դարձաւ, որի վրայ բարձրացաւ Հայաստանի հոգեւոր նուաճումներն ու նորարարական ոգին: Այդ արդի խմբդիրն է այդ աւանդոյթը կենդանի պահել ու զարգացնել:

Նշենք, որ պոլշեւիկները Հնչակեան ընկերվարութիւնը խմբաւորեցին երկրորդ ընկերվարական եւ ոչ թէ լենինեան երրորդ ընկերվարական միջազգայնական մէջ: Համազասպեան այն մարդկանց թւում էր, որոնք պաշտպանում էին հայ յեղափոխական կազմակերպութիւնների ու շարժումների նկատմամբ հին պոլշեւիկեան կեցուածը վերանայելու գաղափարը:

Նման ազատամտական ու ինքնատիպ մտածողութեան օրինակ կարող է լինել Հայաստանի Կուսակցական կենտկոմի արտաքին յարաբերութիւնների բաժնի վարիչ դոկտ. Լեւոն Մանասերեանի այն տեսակէտը, թե Անդրանիկը շատ աւելի ճիշդ ու հեռատես կը վարուէր, եթէ Նախիջեւանը ազատագրելուց յետոյ այն դներ ոչ թէ Լենինի պոլշեւիկեան իշխանութեան, այլ Հայաստանի Հանրապետութեան տրամադրութեան տակ: Այդ առթիւ Լենինը Ձօրավարին կոչում է «ազգային հերոս»: Այդ մակդիրը, սակայն, խորհրդային իշխանութիւնը չի ընդունում իր գոյութեան ողջ ընթացքում:

Այսպիսի լայն պաստառի վրայ միայն կարելի է իմաստաւորել Խորհրդային Հայաստանի շատ մտաւորականների մտքերն ու գործերը: Այդ թւում նաեւ՝ Վարդգէս Համազասպեանի արտայայտութիւնները:

ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ
Լոսանճելիս, ԱՄՆ

# ՀԿՀԿ համաշխարհային վեհաժողովի տարածաշրջանային նախահանդիպում Օսլոյում

2000 թ.-ին Սենեգալի մայրաքաղաք Դաքարում կայացած Կրթության համաշխարհային ֆորումի մասնակից 180 երկրների կառավարությունների կողմից սահմանվել են Համընդհանուր կրթության վեց նպատակները և դրանց հասնելու ժամկետը՝ 2015 թ.: Այդ նպատակներից է՝ բոլոր երեխաներին դպրոց ուղարկելը (մինչև 2015 թ.-ը): Սակայն 2007 թ.-ի տվյալներով դեռևս 73 միլիոն երեխա դուրս է մնում դպրոցից, իսկ 800 միլիոն չափահասներ չգիտեն գրել և կարդալ: ՀԿՀԿ քարոզարշավի արդյունքում դպրոցից դուրս մնացած երեխաների քանակը նվազել է՝ 100 միլիոնից հասնելով 73 միլիոնի: Այնուամենայնիվ, համընդհանուր կրթություն ապահովելու համար անհրաժեշտ է քաղաքական կամքի դրսևորում ինչպես հարուստ երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ աղքատ երկրների կողմից:

2007 թ.-ի նոյեմբերի 26-27-ին ՀՍԻԿ ներկայացուցիչ Լ. Մացակյանը մասնակցել է Նորվեգիայի մայրաքաղաք Օսլոյում տեղի ունեցած Համընդհանուր կոչ հանուն կրթության (ՀԿՀԿ) համաշխարհային վեհաժողովի տարածաշրջանային հանդիպմանը, որն, ըստ էության, ՀԿՀԿ 3-րդ համաշխարհային վեհաժողովի նախապատրաստական փուլն էր:

Հանդիպումը կազմակերպվել էր ՀԿՀԿ քարտուղարության կողմից: Հյուրընկալող կողմն էր ՀԿՀԿ նորվեգական միությունը՝ ի դեմս Նորվեգիայի կրթության միության, որի հիմնական գրասենյակում էլ կայացավ հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին մոտ 25 մարդ Դանիայից, Նորվեգիայից, Իսպանիայից, Ֆրանսիայից, Միացյալ Թագավորությունից, Գերմանիայից, Ճապոնիայից, Բելգիայից և Մակեդոնիայից, ինչպես նաև ներկայացուցիչներ «Փրկեցեք երեխաներին» միջազգային կազմակերպությունից, ՅՈՒՆԵՍԿՈ-ի նորվեգական հանձնաժողովից, Գերմանիայի Օքսֆամ ԲԲԿ-ից, Ճապոնիայի կրթական ՀԿ-ների ցանցից և այլք:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել ՀԿՀԿ 2008-2010 թթ.-ի ռազմավարական ուղղությունները և ազգային միությունների դերը Համընդհանուր կրթության հասնելու ճանապարհին: Հանդիպման ընթացքում («Փրկեցե՛ք երեխաներին» միության «Վերաշարադրել ապագան» քարոզարշավի նախագահ Թոուլ Վանգի կողմից) ցուցադրվեց «Ապագայի պատմությունը» ֆիլմը: Ներկայացվեց նաև ՀԿՀԿ միջանկյալ հաշվետվությունը, ՀԿՀԿ պատմությունը և սահմանադրությունը: Քննարկվեցին 2008 թ.-ի հունվարի 22-24-ին Բրազիլիայում նախատեսված ՀԿՀԿ 3-րդ համաշխարհային վեհաժողովի օրակարգային հարցերը, այդ թվում՝ կրթության որակ, չափահասների գրագիտություն, բռնությունը դպրոցներում, ՄԻԱՎ և կրթություն, Դրամական միջազգային հիմնադրամ, մեթոդմիավորումներ և ՀԿ-ներ, հանրային-մասնավոր հարաբերություններ և այլն:

Սկսած 2003 թ.-ից՝ ամեն տարի ապրիլին Համընդհանուր կոչ հանուն կրթության քարոզարշավի շրջանակներում կազմակերպվում է Համընդհանուր գործողությունների շաբաթ՝ նշելու 2000 թ.-ին Դաքարում կայացած Կրթության համաշխարհային ֆորումի տարեդարձը: Շաբաթվա ընթացքում ավելի քան 100 երկրներում ՀԿՀԿ անդամ ազգային միությունների կողմից կազմակերպվում են Համընդհանուր կրթությանը նվիրված միջոցառումներ, որոնք տեղ են գտնում տարվա Մեծ գրքի (Big Book) մեջ:

2007 թ.-ի ապրիլի 23-29-ը ՀԿՀԿ Համընդհանուր գործողությունների շաբաթվան Միավորվենք հանուն կրթության իրավունքի նշանաբանի ներքո մասնակցել է հինգ միլիոն մարդ, Հայաստանում ապրիլի 23, 25-29-ին 4093 մարդ՝ կազմելով հանուն կրթության միմյանց ձեռք ձեռքի տված մարդկանց շղթաներ: Ստորև ներկայացնում ենք շաբաթվա շրջանակներում Հայաստանում իրականացված միջոցառումների մասին Մեծ գրքում տպագրված նյութը:

«Հայաստանում քարոզարշավի մասնակիցները ժողովել են վկայություններ կրթությունից զուրկ մնացած մարդկանց մասին: Տարբեր մարզերից, քաղաքներից և գյուղերից մոտ 50 դպրոցներ մասնակցել են Համընդհանուր գործողությունների շաբաթվան: Շաբաթվա ընթացքում մարդկային շղթաներ են կազմվել դպրոցների, Սարդարապատի պատմական հուշարձանի և Վանաձոր քաղաքի Մշակույթի պալատի շուրջ: Իրականացվել են նաև այլ գործողություններ, այդ թվում՝ ՀԿՀԿ հանրային լսումներ հանուն կրթության և հայ նշանավոր գրող Հովհաննես Թումանյանի հանրաճանաչ «Իմ ընկեր Նեսոն» ստեղծագործության բեմականացում: Պատմվածքը գրողի ընկերոջ մասին է, որը զրկվել էր կրթությունից՝ աղքատ կենսապայմանների պատճառով»:

# Մեր երեխաները կվայելե՞ն երկիրը, թե՞ կդառնան էկոլոգիական փախստականներ

էջ 3

Կան օրենքներ, կա միջազգային օրենսդրություն, բայց, հավանաբար, բոլոր դեպքերում մեր ջանքերը շատ չնչին են այն գործունեության համեմատ, որը պետք է իրականացվի: Եվ դրա համար մենք շարունակում ենք ստանալ բնության հետադարձ հարվածները: Հայաստանում, ճիշտ է, համաձայնագրերը ստորագրել ենք, ծրագրերը՝ մշակել, հաշվետվությունները ներկայացնում ենք, բայց անբավարար գործունեություն ենք իրականացնում: Բավական է հիշեցնել մեր անտառների շարունակվող կորուստը, կանաչապատ տարածքների կորուստը մեր քաղաքներում: Ի վերջո, ըստ պաշտոնական տվյալների՝ անապատացման, այսինքն՝ դեգրադացիոն գործընթացների ենթակա է Հայաստանի տարածքի զգալի մասը:

Կարինե Դանիելյան

Լ. Մ. – Ձեր կարծիքով, Հայաստանում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ի՞նչ խնդիրներ կան:

Կ. Դ. – Նախ՝ ընդերքի օգտագործումը մեծ թափ է ստանում հիմա, ինչն էկոլոգիայի տեսանկյունից ամենավտանգավոր գործունեությունն է: Մեր մշակած հայեցակարգում մենք զարկ ենք տալիս ազգի մտավոր ներուժի օգտագործմանը, այսինքն՝ գիտության զարգացմանը, գիտության արդյունքների կոմերցիոնալիզացման գործընթացին, իսկ այժմ... Ընդերքը քանդելն ամենահետամնաց երկրների զարգացման ուղին է: Հնարավոր է, որ դա որոշ ժամանակ ինչ-որ տնտեսական շահույթ կբերի, բայց հետագայում պատճառ կդառնա տարածքի կորստի և մեծ վնասների:

> ... ցավոք, թափոնների կառավարման արդի համակարգ մեզ մոտ չձևավորվեց, և մեզանում դեռևս նախնադարյան տարբերակն է գործում: Բավական է տեսնել մեր գետերի վիճակը...

Հրատապ խնդիր է նաև մեր քաղաքների էկոլոգիական վիճակը: Երևանը քաղաքաշինական բիզնեսի արդյունքում «կորցնում է իր թոքերը»: Ճիշտ է, էներգետիկ ճգնաժամի ընթացքում ևս մեծ կորուստներ եղան, բայց արդեն սկսվել էր վերականգնման գործընթացը: Շատ ուրախալի է, որ հիմա Վանաձորում վերականգնվում է արդյունաբերությունը: Պետք է ամեն ինչ արվի, որ այն վերականգնվի պատշաճ մակարդակով, որպեսզի քաղաքին էկոլոգիական վնաս չհասցվի: Ի վերջո, ժամանակակից տեխնոլոգիաները դա թույլ են տալիս. պարզապես դրանք բավականին մեծ գումարային ներդրումներ են պահանջում:

Սևանի խնդիրը մեզանում նույնպես շատ լուրջ է, և, փառք Աստծո, լիճը հիմա սկսել է բարձրանալ: Դա լավ է, սակայն ափերի նախապատրաստումը չիրականացվեց այնպես, ինչպես հարկն է, չնայած բազմաթիվ ահազանգեր են հնչել, և մենք հասարակական կազմակերպություններս, դրա մասին բազմիցս գրել ենք, դիմել կառավարությանը: Ի վերջո, դեռևս խորհրդային տարիներից հատուկ նախագծեր կային, թե Սևանի ափերն ինչպես պետք է ջրասուզմանը նախապատրաստվեն: Ցավոք, դա չեղավ, և, փաստորեն, շատ տեղերում ավելի բացասական արդյունքներ ունենք: Սևանում նաև ձկնային պաշարների կորուստ կա. իշխան ձուկը բնական ճանապարհով այլևս գրեթե չի վերարտադրվում, միայն արհեստական ճանապարհով ենք կարողանում ապահովել ինչ-որ քանակի վերարտադրություն: Նաև սիգ ձկան քանակն է նվազել: Կորուստը մեծ է, մենք ոչ միայն կորցնում ենք ձկնային պաշարները, այլև լճի տրոֆիկացման գործընթացն ավելի է արագանում, քանի որ տրոֆիկ շղթաներ գոյություն ունեն, և ձուկն այդ լճում ամենաբարձր օղակն է. եթե սիգը վերանում է, մնացած հատվածները մնում են լճում: Ճիշտ է, լճի ափերն սկսել են մաքրել, բայց բավականին զգալի կենսազանգված մնաց ջրի տակ, թափոններ մնացին ջրի տակ, և դա, իհարկե, մեծ վնաս կտա լճին:

> Երբ քաղաքին ես մոտենում, արդեն իսկ հեռվից տեսանելի է... ծառերի ճյուղերից ցելոֆաններ են կախված, փողոցներում՝ դատարկ տուփեր նետված... դա վկայում է մեր առօրյա կենցաղայիսն մշակույթի ցածր մակարդակի մասին:

Լ. Մ. – Տիկին Դանիելյան, Սևանի ավազանի տարեց բնակիչները կարոտով են հիշում 19-րդ դարի 30-40-ական թվականները, երբ Սևանա կղզին կղզի էր... Մենք միայն երևակայել կարող ենք, թե դա ինչ անձեռակերտ հրաշալիք է եղել... Հնարավո՞ր է արդյոք, որ ինչ-որ ժամանակ լճի մակարդակը բարձրացվի ոչ թե 6 մետրով (ինչը նույնպես, ցավոք, վիճարկվում է), այլև լիճը վերականգնվի իր բնական չափերով ու գեղեցկությամբ, ինչպես այն պատկերել է նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը:

Կ. Դ.– Քիչ հավանական է, որ լիճը վերականգնվի 1916 մ մակարդակով, այսինքն՝ ուղղակի հնարավոր չէ, քանի որ բազմաթիվ շինություններ կան, և կորուստները շատ մեծ կլինեն: Բացի դրանից՝ Արփա-Սևան թունելի բարձրությունը դա թույլ չի տալիս, բայց այն նպատակը, որ դրվել է՝ գոնե 1903,5 մ-ի հասնելու, պարտավոր ենք իրագործել: Պարզապես պետք է այնպես անել, որ վնասի փոխարեն օգուտ տրվի լճին: Դա օրենքով ամրագրված է Ազգային ժողովի կողմից, Կառավարության որոշումներով, և լավ է, որ կառավարությունն ամեն տարի պարտավոր է հաշվետու լինել Ազգային ժողովին Սևանի էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ:

Լ. Մ. – Այսօր շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներից է նաև աղբահանությունը:

Կ. Դ. – Այո, ցավոք, թափոնների կառավարման արդի համակարգ մեզ մոտ չձևավորվեց, և մեզանում դեռևս նախնադարյան տարբերակն է գործում: Բավական է տեսնել մեր գետերի վիճակը, որպեսզի հասկանանք, թե թափոններն ինչ ենք անում: Փաստորեն, երբ գարնանը գետերը վարարում են, և հետո իջնում է դրանց մակարդակը, այն աղբը, որ գետերի մեջ ենք լցնում, մնում է ծառերի վրա կախված: Դա մի սարսափելի տեսարան է: Բացի դրանից, երբ քաղաքին ես մոտենում, արդեն իսկ հեռվից հասկանալի է... ծառերի ճյուղերից ցելոֆաններ են կախված, փողոցներում՝ դատարկ տուփեր նետված... դա վկայում է մեր առօրյա կենցաղային մշակույթի ցածր մակարդակի մասին:

Լ. Մ. – Դուք վերջերս եղել եք Շվեյցարիայում, մի երկիր, որը հայտնի է իր մաքրամաքուր բնությամբ ու շրջակա միջավայրով: Ինչու՞ մեր երկիրը նույնպես չի հասնում նման մակարդակի, և ինչու՞ մեզ մոտ դեռևս լուրջ խնդիր է աղբահանությունը:

Կ. Դ. – Երկի ճանապարհ պիտի անցնենք: Ժամանակին արևմտյան երկրները նույնպես, իհարկե ոչ այդքան, բայց բավականին վատ էկոլոգիական իրավիճակ են ունեցել, հիմա, իհարկե, բարվոք վիճակ է: Մեզանում առաջին հերթին պետք է լինի համապատասխան մշակույթ, ձևավորվի աշխարհայացք: Եթե մտադրվենք, կարող ենք բոլոր խնդիրները լուծել, բայց հայերիս մոտ մի շատ վտանգավոր մոտեցում կա, որ խոցելի է. «Ինչն ինձնից դուրս է, իմ խնդիրը չէ, ես սահմանափակում եմ իմ բոլոր խնդիրներն անձիս և ընտանիքիս շուրջ, լավագույն դեպքում՝ իմ «կլանի» շուրջ»: Ընկալել քաղաքը, երկիրը որպես պատասխանատվության ոլորտ, մենք դա չունենք: Մարդը կարող է իր բնակարանի, ավտոմեքենայի պատուհանից աղբը դուրս նետել հենց քաղաքի կենտրոնում, գետի մեջ, քանի որ դա իրենից դուրս է... Մենք չունենք երկրի տիրոջ զգացումն ու համապատասխան մոտեցումը:

> Ընդերքը քանդելն ամենահետամնաց երկրների զարգացման ուղին է: Հնարավոր է, որ դա որոշ ժամանակ ինչ-որ տնտեսական շահույթ կբերի, բայց հետագայում պատճառ կդառնա տարածքի կորստի և մեծ վնասների:

Լ. Մ. – Ինչպե՞ս են արձագանքում և ի՞նչ միջոցներ են ձեռնարկում Հայաստանի Կառավարությունը և մյուս հասարակական կազմակերպությունները նման հարցերի կարգավորման նպատակով:

Կ. Դ. – Մեզանում կարծես այդ դերակատարումը չի համապատասխանում անհրաժեշտ մակարդակին, թեև ունենք համապատասխան օրենքներ, սակայն դրանք վատ են գործում: Եթե օրենքները գոնե կիսով չափ գործեին, այսպիսի վիճակ չէինք ունենա: Բոլորս փորձում ենք այդ ուղղությամբ ինչ-որ բան անել, բայց միշտ պատնեշի ենք հանդիպում, ընդունում ենք այսպես կոչված «քաղաքական որոշումներ», այսինքն՝ օրենքները շրջանցելով կարելի է որոշում ընդունել: Բազմաթիվ նման օրինակներ ունենք: Մենք հիմնականում օրինապահ ժողովուրդ չենք: Եթե սովորենք հարգել մեր ընդունված օրենքները, ընդ որում՝ օրենքներն էլ գործեն հավասարապես բոլորի, հատկապես իշխանավորների, ոչ թե միայն աղքատ ու խեղճ մարդկանց համար, այդ դեպքում միայն հնարավոր կլինի հասնել դրական արդյունքների:

Լ. Մ. – Կա՞ արդյոք համագործակցություն լրատվամիջոցների հետ՝ վերոնշյալ խնդիրները բարձրաձայնելու և Կառավարությանն ու հանրությանը զգոն պահելու նպատակով:

Կ. Դ. – Լրատվամիջոցները մեզ շատ են օգնում, սակայն ակնհայտ է, որ հատկապես հեռուստատեսությունը գտնվում է խիստ վերահսկողության տակ, և շատ դժվար է հեռուստաընկերությունների համար իրոք անկախ ծրագրեր իրականացնել: Առանձին, կամավոր կերպով փորձում են օգնել: Սակայն չկա էկոլոգիական վերահսկողություն, չկա քաղաքական կամք. ակնհայտ է, որ դրանք առաջնային չեն համարվում, իսկ ՀԿ սեկտորը ուժերի ներդրծին չափով փորձում է հաստատել դրա առաջնահերթությունն ու նպաստել, որ օրենքները գործեն:

Լ. Մ. – Կա՞ն արդյոք շոշափելի արդյունքներ:

Կ. Դ. – Այո, կարելի է ասել, որ կան. և՛ սահմանադրության, և՛ օրենսդրության մեջ առկա է էկոլոգիական ներթափանցում, էկոլոգիական գաղափարախոսության զարգացում, ազգային անվտանգության հայեցակարգում հատուկ ռազմավարություն կա: Խնդիրն այն է, որ գործնականում դա կիրառվի: Օրինակ՝ Օպերայի և բալետի պետական թատրոնի շենքի բակում մեծ փոս էր փորված, բարձրահարկ շենք պիտի կառուցվեր, կանխեցի՛նք: Մեզ անհանգստացնում էր նաև քաղաքի կարգավիճակը. Երևանը փորձում էին բաժանել ութ փոքր քաղաքների, որի արդյունքում քաղաքը բացարձակ անվերահսկելի կդառներ՝ հատկապես էկոլոգիական տեսանկյունից:

Լ. Մ. – Ո՞րն էր Երևանը փոքր քաղաքների բաժանելու նպատակը:

Կ. Դ. – Գուցե շատ կոպիտ կհնչի, ենթատեքստ կա այստեղ, իմ պատկերացմամբ՝ ֆեոդալիզմի ծիլեր կան ամբողջ հանրապետությունում: Միգուցե միայն Երևանն է, որ չի ենթարկվում դրան. մեծ քաղաք է, և դժվար է խցկել ֆեոդալական հարաբերությունների մեջ, իսկ եթե փոքր քաղաքներ լինեին, ավելի հեշտ կլիներ նման հարաբերություններ հաստատել: Փառք Աստծո, մեզ հաջողվեց դա կանխել: Կան նաև այլ փոքր հաջողություններ, բայց, անշուշտ, հաջողությունը պետք է համակարգային լինի, պետք է ձևավորվի քաղաքական կամք, և դրսևորվի համազգային մոտեցում:

Լ. Մ. – Կա՞ն արդյոք վիճակագրական տվյալներ, որոնք փաստում են, թե էկոլոգիական տեսանկյունից Հայաստանը որերորդ տեղն է զբաղեցնում աշխարհում:

Կ. Դ. – Նման տվյալներ չկան, սակայն դոկտորական աշխատանքս գրելիս նմանօրինակ ուսումնասիրություն՝ էկոլոգիական համալիր գնահատում եմ կատարել, որի արդյունքում Հայաստանը մոտավորապես միջին մակարդակում է հայտնվել:

Լ. Մ. – Իսկ եթե ավելի նեղ՝ մարզային մակարդակով դիտենք, ո՞րն է էկոլոգիապես ավելի մաքուր համարվում:

Կ. Դ. –Դժվարանում եմ ասել. հիմա այդ ուղղությամբ ենք աշխատում:

Կ. Դանիելյանը եզրափակեց զրույցն՝ ասելով. «Պետք է փորձենք հասկանալ, որ այսօր լուծում ենք մեր ապագայի խնդիրը: Մեր երեխաները ապրելու՞ են այս երկրում, վայելելու՞ են այս երկիրը, թե՞ դառնալու են «էկոլոգիական փախստականներ»:

Հարցազրույցը վարեց
ԼՈՒՍԻՆԵ ՄԱՑԱԿՅԱՆԸ

# «ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՑԻՎ...»

## Իրավապաշտպանը հրավիրում է բանավեճի

Ստորև ներկայացնում ենք ճանաչված իրավապաշտպան, Ա. Դ. Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի նախագահ Լևոն Ներսիսյանի հրապարակախոսական հոդվածը, որտեղ հեղինակը արդիական հարցեր է բարձրացնում և հրավիրում բանավեճի: Խմբագրությունը միանում է նրա հրավերին՝ բարձրացված խնդիրը ներկայացնելով հասարակության լայն շրջանների քննարկմանը: Խմբագրությունը պատրաստ է տպագրել խնդիրին արծարծող նոր հոդվածներ, արձագանքներ, կարծիքներ:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների 2007 թ. չորրորդ գումարման ընտրությունների արդյունքները բացահայտեցին հասարակության մեջ տեղ գտած որակական տարբերությունները՝ 90-ական թվականների սկզբին ձևավորված իրավիճակի համեմատությամբ:

Չափազանց պարզունակ կլիներ այդ փոփոխությունները բացատրել (ինչպես դա հնչում է արմատական տրամադրվածության շրջանակներում) ընտրարշավների ընթացքում իշխանական թևի կողմից «կեղտոտ տեխնոլոգիաների» համընդհանուր կիրառմամբ և բնակչության լայն շերտերի վրա տարբեր տեսակի ճնշումներով:

Եթե հաշվի առնենք, որ «ընդդիմության» որոշակի մասը ևս «մաքուր» չէր և ընտրազանգվածի վրա ազդելու համար օգտագործում էր ցեղա-կլանային ու կիսաքրեական ուժեր, ապա տեղին է հարցնել, թե՝

• ի՞նչ է իրենից ներկայացնում մեր հասարակությունը, որը կարող է անպատիժ ձեռնածության ենթարկվել «քաղաքական առաջնորդների» կողմից՝ անկախ նրանց սոցիալ-քաղաքական և հասարակական երանգներից.

• իր բազմազանությամբ հանդերձ մեր հասարակությունն ունի՞ արդյոք միասնական ոգի և բնութագիր.

• ի՞նչ բարոյական և հոգևոր արժեքներ են միավորում մեզ՝ անհատներիս, որն ապագայում հնարավորություն կտար պաշտպանել մեր պետականությունը:

Հայրենիքում, գուցե նաև Սփյուռքում, շատ քչերն են մտորում մեր հասարակության հոգևոր զարգացման հեռանկարային ուղիների մասին, որոնք նաև պետք է կազմեն մեր պետականության գաղափարական հիմքը:

Որքան էլ ցավալի է, մեր հասարակական և անհատական գիտակցությունը պարուրված է «մանր» շահերի բավարարման մտահոգություններով: Դրանք մեզ ավելի ու ավելի են հեռացնում հեռանկարային հիմնախնդիրներն ուսումնասիրելուց ու քննարկելուց:

**Հայաստանում անհատն իրեն չի տեսնում որպես իր երկրի քաղաքացի և բարոյական պատասխանատվություն չի կրում Հայրենիքի ճակատագրի համար: Մեր երկրում ողջ հասարակական կյանքը կողմնորոշված է դեպի արտաքին ուժերը և ոչ թե ազգի ներուժը:**

Մեր հասարակությունը և «հասարակական միտքը» չեն տեսնում «վաղվա մեր հոգևոր օրը»: Այստեղից էլ երկրի բնակչության մեծամասնության մոտ տիրապետող անելանելիության զգացումը (հատկապես երիտասարդության մոտ, որի 76.8 տոկոսն իր ապագան տեսնում է արտերկրում): Հայրենական հասարակական շարժումն ընդհանրապես գաղափարներ չունի՝ ուղղված հասարակության հոգևոր վերածնունդին: Այն իր գործունեությունը քողարկում է ժողովրդավարական ինստիտուտների կառուցման ուղիների, քաղաքացիական հասարակության հիմքերի ստեղծման և մարդու իրավունքների ու ազատությունների մասին կարգախոսներով՝ նշված հասկացություններն ընդունելով որպես անառարկելի ճշմարտություններ, որոնք ի զորու են արևմտյան «նմանօրինակը» նույնությամբ զետեղել հայրենական հասարակական հաստատությունների «հողում»:

Հայրենական «առաջադեմ մտավորական մտքի» լայն շրջաններում ժողովրդավարության կառուցման նպատակները ընկալվում են նույնիմաստով, ինչ արևմուտքում:

Արբեցած ձեռք բերված անկախությամբ և Լեռնային Ղարաբաղի ազատագրմամբ՝ հասարակությունը չնկատեց էլ, թե ինչպես անիրազեկ ու քրեականացված իշխանությունն իր չարչիական շահերի նպատակով ժողովրդի ազգային միասնության գաղափարը փոխարինեց ազգայնական կարգախոսներով:

Հասարակությունում սկսեցին ձևավորվել տարբերական ու պարզ ընբռնումներ մեր պետականության և ինքնատիպության մասին՝ հիմնված ազգայնամոլության վրա: Հազարամյակներով թրծված մեր ազգային անհատականությունն ու ինքնատիպությունը փոխարինվեցին ազգայնական սնապարծությամբ և մյուսների նկատմամբ բացառիկության և գերազանցության հավակնություններով:

Պարզեցված ընբռնումների արմատավորման արդյունքում հասարակական միտքը բաժանվում է երկու հակամարտող ուղղությունների, որոնցից մեկը տանում է դեպի հինգնամեկուսացում՝ մարդկության ընդհանուր պատմության մեջ և հասարակական մտքի մասշտաբայնության սահմանափակում, իսկ մյուսը «գռեհիկ» կոսմոպոլիտիզմ՝ մեր ժողովրդի ինքնատիպության մերժմամբ, ու որպես արդյունք տանում դեպի ստրկամիտ խոնարհում՝ մեր մտածելակերպին օտար գաղափարախոսության ու կենսաձևի առջև:

Հասարակական մտքի այս առաջին հայացքից իրարամերժ ուղղությունները գործնականում հանգեցնում են երկրի պետական, քաղաքական և տնտեսական կարգավորման հարցերում հասարակության դերի սահմանափակ ընկալման: Հասարակական մտքի նմանօրինակ մակերեսայնությունն ու պարզեցվածությունը գերիշխում են նաև ժողովրդավարության գաղափարների մեր հասարակական ընկալման մեջ:

Մեր հասարակության ճնշող մեծամասնության համար, ովքեր սովոր են ապրել համայնքա-կլանային և ցեղա-ընտանեական կազմավորումների բարոյա-էթիկական կանոններով, ժողովրդավարության գաղափարները ներկայանում են որպես հեռավոր ու հասարակ և նախատեսված են սոսկ անձնական շահերի պաշտպանության համար:

**Մեր հասարակության ճնշող մեծամասնության համար, ովքեր սովոր են ապրել համայնքա-կլանային և ցեղա-ընտանեական կազմավորումների բարոյա-էթիկական կանոններով, ժողովրդավարության գաղափարները ներկայանում են որպես հեռավոր ու հասարակ և նախատեսված են սոսկ անձնական շահերի պաշտպանության համար:**

Ժողովրդավարության գաղափարները, որոնք սահմանափակ և պարզեցված ձևով արմատավորվում են մեր հայրենիքում, ծնում են բարոյա-էթիկական հիմնախնդիրների մի ողջ «փունջ»:

Ժողովրդավարության գաղափարախոսությունն անհատի գիտակցության մեջ «սնուցող միջավայր» չգտնելով, անձին զատում է հասարակության հանդեպ նրա ունեցած քաղաքացիական պատասխանատվությունից՝ այն դնելով հասարակության վրա: Դա նպաստում է հասարակական բարոյական այնպիսի նորմի ձևավորմանը, ըստ որի՝ կյանքի բոլոր առումներով բարելավումն ակնկալվում է դրսի օգնությամբ, այսինքն՝ ստեղծվում է համընդհանուր խնամառության և սպասումների բարոյականություն[1]:

**Այս կարգի ժողովրդավարությունը հիմնվում է անհասկանալի և ընդհանրապես անիրականանալի խոստումների, քաղաքական և հասարակական գործիչների հրապարակային վիրավորանքների ու մեղադրանքների, հասարակության մեջ «դեղին» մամուլի սադրանքների վրա, որն էլ հասարակության մեջ ծնում է «ամբոխային» ցածր բնազդներ և չի նպաստում անհատի գիտակցության ու ոգու էական փոփոխությանը:**

Հայաստանում անհատն իրեն չի տեսնում որպես իր երկրի քաղաքացի և բարոյական պատասխանատվություն չի կրում Հայրենիքի ճակատագրի համար: Մեր երկրում ողջ հասարակական կյանքը կողմնորոշված է դեպի արտաքին ուժերը և ոչ թե ազգի ներուժը:

Այս կարգի ժողովրդավարությունը հիմնվում է անհասկանալի և ընդհանրապես անիրականանալի խոստումների, քաղաքական և հասարակական գործիչների հրապարակային վիրավորանքների ու մեղադրանքների, հասարակության մեջ «դեղին» մամուլի սադրանքների վրա, որն էլ հասարակության մեջ արթնացնում է «ամբոխային» ցածր բնազդներ և չի նպաստում անհատի գիտակցության ու ոգու էական փոփոխությանը:

Նման պայմաններում հասարակական միտքը չի նպաստում մարդկային արժանապատվության բարձրացմանը, նրա բնավորության ու ոգու և մեր երկրի ապագայի նկատմամբ հավատի ամրապնդմանը:

Սա անհատի և ընդհանուր առմամբ հասարակության բարոյական այլասերում է: Վերացական ժողովրդավարությունը ձևապաշտություն է, որն արտահայտվում է ձևական ժողովրդական իշխանության տեսքով:

Իշխանությունը չի կարող պատկանել բոլորին: Սակայն հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է և՝ բարոյապես, և՝ հոգեպես կապված լինի իր հայրենիքին ու պատասխանատվություն կրի նրա ապագայի համար:

Եվ, ինչպես միշտ, ծագում է «ի՞նչ անել» խորհրդանշական հարցը:

Շատերն առաջարկում են մշակել կանոնների ժողովածու և ղեկավարվել այդ «կատեխիզիսով»:

Հարցի լիարժեք պատասխանը կախված է հասարակական մտածողության կառուցողական և ապակառուցողական մակարդակների հարաբերակցությունից և հասարակության յուրաքանչյուր անդամի պատրաստակամությունից իր կեցության խնդիրները լուծելու բարոյա-էթիկական չափանիշներից ելնելով, այլ ոչ թե մեկուսանալով չարչիական ու օգտապաշտական գավառականության շրջանակներում:

Նպատակահարմար կլիներ սույն հիմնախնդիրը ներկայացնել լայն հասարակայնության քննարկմանը: Մտքերի փոխանակության արդյունքում անհատի համար պարզ կդառնար, թե ինչպիսին է սույն հիմնախնդրի լուծման իր քաղաքացիական դիրքորոշումը, իսկ իշխանության գլուխ կանգնածների ու նրանց «շրջապատողների» համար պարզ կդառնա, որ հասարակությունն ապրում է «ոչ միայն հացիվ...»:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ա. Դ. Սախարովի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի նախագահ

**Հազարամյակներով թրծված մեր ազգային անհատականությունն ու ինքնատիպությունը փոխարինվեցին ազգայնական սնապարծությամբ և մյուսների նկատմամբ բացառիկության և գերազանցության հավակնություններով:**

1. Այս կանխադրույթը տիրել է ոչ միայն հասարակական միտքը. այն իր արտացոլումն է գտել նաև հասարակության սոցիալ-կենցաղային հիմնախնդիրները լուծելիս: Մենք մեր բնույթով դարձել ենք խնամարկյալ: Հումանիտար ու ֆինանսական օգնություն ենք սպասում արտերկրում բնակվող մեր ազգականներից (տես մասնավոր բանկային փոխանցումների ծավալը համեմատած երկրի բյուջեի հետ), վարկեր և օգնություն արտասահմանյան երկրներից:

# ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԵՍԱԿԵՏ

Ես - երգեցիկ եղեգ,- ինչու՞ այսքան տրտում
Պիտի դողամ լույսիդ անեզրության հանդեպ…

*Պոեզիայի սրբազան տաճարում աղոթելու աստվածային շնորհն ընտրյալներին է վերապահված, որ դարերի իմաստնության ուժով, ազգային ոգու խտացման ինքնահատուկ դրսևորումներով իրենց ազդեցիկ խոսքն են հղում Աստծուն, աշխարհին և ամեն մարդու, այն է՝ հավիտենությանը: Սրբազան այդ տաճարի աղոթասացներն այնուհետ իրենք են սրբանում՝ ամեն անգամ «սարսափելի՛ ճերմակ» թղթին խոնարհվելով և նրանից հեռանալով որպես «երկնքի պես աչքերով» մանուկ, որպես մաքրագործված հոգի: Զարենցն էլ էր տառապանքով հեռանում իր նորածին երգերից, մինչդեռ տառապանքով արարվածն այսօր լույսով ենք ըմբշխնում, չարենցյան բիսուն պոեմիումներն ակնածանքով ենք ընթերցում:*

*«Ժամանակի շունչը լինելու» իր պատգամին հավատարիմ՝ անհաղորդ չմնաց կատարվող իրադարձություններին, բայց չթողեց ինքնագույտ պոեզիայի տրոփուն երակը, յուրաքանչյուր վայրկյանն ապրեց Զարենցի՛ պես:*

*Լռեց մի՛ այն երկրային կյանքի ընդհատմամբ:*
*Այնուհետ խոսեցին:*

23.X.1936

…Շնորհակա՜լ եմ, Տե՛ր, այն ամենի համար,
Որ տվեցիր դու ինձ կյանքում իմ խեղճ. –
Եվ տքնությամբ ազնիվ իմ վաստակած հացի,
Եվ կանացի մարմնի՝ հացի՝ պես սուրբ, –
Ե՛վ պարտությանց համար այս բիրտ մարտում,
Եվ հաղթությանց համար երբեմնակի: –

Եվ – վերջապես – ձեռքով քո շնորհած
Ամենամեծ բախտի և բերկրանքի համար՝
Մուսաների՝ անեղծ մտերմության,
Որ քչերի՞ն է այս կյանքում տրվում,
Իբրև բարիք վերին՝ անգըտնելի ընծա: –

Բայց աշխարհում այս գոց, այս կյանքում բի՛րտ,
Ուր լա՛ցն է լոկ օրենք, և դառնությունը՝ հաց, –
Քո այդ պարգևը սուրբ, երջանկագույն
Կարող էր մաղձ ծնել միայն իմ դեմ,
Մերժվածների դաշինք ու հալածանք: –

…
Եվ չէ՞ր արդյոք միակ պատճառն այս, Տե՛ր, –
Որ դառնություն դարձավ, և՛ մաղձ, և՛ ցավ, –
Այդ անապակ պարգևը՛ քո վերին –
Քո պարգևած ընծան այդ սրբազնագույն՝
Քո դուստրերի անեղծ մտերմությունը կույս…
Մտերմությունն անհաս Մուսաների,
Որ դարձրներ պիտի ողորմելի իմ կյանքը
Երանությու՛ն – և խինդ անմահական…
……
……
Սակայն նրանց այդ սուրբ մտերմության
Ակընթարթի համար անգամ չնչին –
Ես ցանկությամբ հոժար կտանեի
Տասնապատի՛կ դժվար տառապանք –
Եվ դառնություն դժնի, և՛ տխրություն,
Եվ չարչարանք անգամ անագորույն-
Եվ հալածանք ամեն,– և՛ անգամ մա՛հ…
……
……

23.X.1936, Երևան, գիշեր-առավոտ-գիշեր

# Լեռնամարտ

- Հավսա՛ր, զգա՛ստ,- լսվեց Սիփանի խրոխտ հրամանը,- ո՛վ մարդկության փոկիչ Արարատ լեռ, քո հրամանով հայոց արևմտյան բոլոր լեռները հավաքվել են՝ ի սպաս հրամանիդ:

- Ողջո՛ւյն, իմ քաջազո՛ւն լեռներ,- արձագանք տվեց Արարատի բամբ ձայնը: - Այսօր խռովահույզ հոգիս ձեզ լավ լուրեր է ավետելու: Հայոց արծիվները, որոնց թռիչքը ոչ մի փշալար չի խոչընդոտում, ինձ բաղձալին ավետեցին: Մեր եղբայրներ Արագածը, Կապուտջիղը, Խուստուփը, Աժդահակը, Իշխանասարը, Հատիսը, Լալվարը իրենց սեգ «գնդերով» ազատագրեցին տափաստանի ժողովուրդներից գերեվարված Մռավին, Եղնասարին, Քաշաթաղին…

- Կեցցե՛ն մեր հերոս եղբայրները,- գոչեցին Արարատի շուրջը խմբված վեհապանծ լեռները: Կարծես երկրաշարժը ցնցվեց, և երբ ուրախության ալիքը մի պահ դադարեց, Արարատը շարունակեց.

- Ճիշտ է, բազում լեռներ են խոցվել արկերից, բայց նրանց վերքերն ապաքինում են մեր զորեղ գետերը: Հայրենի արծիվներն ինձ ավետում են այն մասին, որ մեր եղբայրները պատրաստվում են մեզ ազատագրել շղթաներից:

- Կեցցե՛ն մեր եղբայրները,- որոտընդոստ ցնծացին հայոց լեռները: Հայոց գետերը մի պահ կանգնեցրին իրենց հոսքը, հետո ավելի քաջաշորեն ալիքվեցին դեպի լեռների քարքարոտ ստորոտները:

- Բայց պետք է աջակցենք այս սրբազան գործին: Նեմրութ և Թոնդրակ, երբ պահը գա, պետք է հրե լավայով ողողեք տափաստանի հորդաներին: Տավրո՛ս, քո բյուր լեռներով պետք է պաշտպանես երկիրը հարավից մինչև արևմուտք: Մարութա՛ սար, զորավի՛գ եղիր յուրաքանչյուրիս բազկին, իսկ դու, Արա՛քս, կփրփրես՝ հորդաների հետ հեռու քշելով նաև փշալարերն ատելի:

Տիրեց լռություն. լսվեց ընդերքից ելնող մի խուլ ձայն. հայոց լեռների սիրտն էր բաբախում: Որքա՜ն արագ էր այն բաբախում:

- Ինձ մո՛տ եկեք, հայո՛ց արծիվներ,- շարունակեց Արարատը,- լուր տարեք աշխարհասփյուռ հայերին, որ «օտարի հացի բույրն ախորժ չէ հայոց լեռներիս, օտարի մեղեդին դյութիչ չէ, օտարի պարը սիրելի չէ, օտարի լեզուն՝ անընդունելի»: Հիշեցրե՛ք նաև, որ հայրենի շիրիմները սրբորեն պահպանում ենք մեր գրկում: Հայո՛ց բազեներ, ուխտս տարեք ի լուր աշխարհի, որ տենչում եմ լսել հայոց եկեղեցու զոդանջները, հոգեցունց հորովելը, երազում եմ վայելել լեռնցու պարերը խենթ, կամենում գգվել սիրասուն զավակներիս:

Տիրեց լռություն: Լսվում էր միայն երկրի ընդերքից ելնող մի խուլ ձայն: Հայոց լեռների սրտի բաբախն էր:

ՎՐԵԺ ԲԱԴԱԼՅԱՆ
Կապան

## Ինչու՞ հենց «տիտանական աշխատանք»

Տիտան բառի բացատրությունն է հսկա, վիթխարի, իսկ Տիտանը դիցաբանական աստվածների շարքում առաջին սերնդի աստվածներից է:

Տիտանյան Բելը (Նեբրովթ) Աստծո ընտրյալ Նոյի անեծքին արժանացած Քամի ժառանգներից էր: Նա հաղթանդամ էր, շատակեր ու պիղծ, կարող էր մի գիշերվա ընթացքում բազում կույսերի բռնաբարել, խմել մի քանի տիկ գինի, ուտել մի քանի կենդանի և այլն: Նրա ժամանակակիցներն այդ «գործերով» էին որոշում նրա աստված լինելը… Իրեն աստված հռչակելով՝ Բելը բռնացավ ու իրեն ենթարկեց շատերին, զավթեց Աստծո օրհնանքին արժանացած Սեմի հետնորդ Եբերին ժառանգություն տրված տարածքը և նախաձեռնեց բաբելոնյան աշտարակաշինության պիղծ գործը:

Սրանք, իրոք, համապատասխանում են տիտանական աշխատանքի բնութագրին, բայց միայն բացասական իմաստով (չնայած այժմ այն կիրառվում է դրական իմաստով՝ լավ գործերի համար):

Մինչդեռ Աստծո ընտրյալ Նոյի ժառանգորդ, գեղեցկատես ու դյուցազուն Աղեղնավոր Հայկը, որ Աստծո անվան և օրենքների համար աշխարհում առաջին սրբազան պատերազմը մղեց, սպանեց պիղծ Բել-Նեբրովթին և վերջ դրեց կռապաշտությանը, հանիրավի անտեսվում է՝ չընդունվելով որպես դյուցազնական աշխատանքի չափանիշ: Սակայն չէ՞ որ հսկային հաղթողն առավել զորեղ է ու դյուցազուն. էլ ինչու՞ արջի ծառայություն մատուցենք այդ պարտված ամբարտավանին և դեռ կրենք Տիտանյան ազգանունը:

Տիտանական սխրանք էր որակվում նաև ԽՍՀՄ աստվածաերժ գործունեությունը: Իր ամվանը զոհ գնաց անգամ TITANIK նավը: Այս ամենի մեջ ընդգծված են միայն բացասական երևույթները:

«Տիտանական աշխատանք» արտահայտությունը թող կիրառեն Քամի և Բելի հետնորդները, միայն թե ոչ մենք, այն էլ՝ դրական իմաստով: Իսկ մենք, արժանին մատուցելով մեր նահապետ Հայկին, պետք է օգտագործենք հայկյան նետի ուժը, զորությունը, նպատակներն ընդգծող «դյուցազնական աշխատանք» արտահայտությունը, որ նաև աստվածահաճո է:

ՀՐԱՉ ՄԱՐՈՒՔՅԱՆ

*Ոտանավոր*

## ԼԻԱ ԹՈՐՈՍՅԱՆ

### Հուշերի գաղտնիքը

Երբ անցած հուշերն ինձ հյուր են գալիս,
Ես ինձ զգում եմ բերդի պես ամուր,
Աշխարհը ասես քաղցրանում աչքիս,
Դառնում է հենց նոր թխած հացի բույր:

Վշտի մի նշույլ ինձ չի մոտենում,
Հուշերն այդ վահան են դառնում բազկիս,
Ինչ փորձություն էլ որ ինձ պատահում,
Անզոր է դառնում ընկճելու հոգիս:

Սակայն հուշերն այդ երբ հեռանում են,
Վշտերի բովում այրվում է հոգիս,
Դառնում եմ թշվառ մի խղճուկ ճամփորդ՝
Հոգսերի տհաճ բեռը շալակիս:

Սպառվող կյանքիս երկնակամարում
Ամպեր են կիտվում փորձության տեսքով
Եվ ինչպես ուժգին տեղացող կարկուտ,
Անպաշտպան գլխիս իջնում են թափով:

Որքան փորձում եմ գտնել հուշերիս
Գաղտնիքն՝ այնքան խոր ու ծածուկ պահված,
Չեմ կարողանում ես բացահայտել,
Դրանք դառնում են մի մութ առեղծված:

Խնդրում եմ, Տե՛ր իմ, օգնի՛ր ազատվեմ
Սիրտս կեղեքող այս ապրումներից,
Ձգամ սերդ անկեղծ՝ մոր արցունքի պես,
Հոգիս դուրս հանեմ վշտերի ծովից:

## Հոգեւոր

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՏԵՐ ՇՄԱՎՈՆ ՔԱՀԱՆԱ ՂԵՎՈՆԴՅԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԲՆ ԴՊԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

– Ինչու՞ եկեղեցին չի վերացնում այս կամ այն արարողությունից հետո այսպես կոչված խաչհամբույր տալը:

Դեռևս Հին Կտակարանից է հայտնի՝ երբ Աստված տաճար էր կառուցում և այնտեղ քահանաներ կարգում, նրանց ապրուստն Աստծո պատվիրանի համաձայն հոգում էր հրեա ժողովուրդը: Մարդիկ տասանորդ էին վճարում ու նվիրատվություններ անում տաճարին, քանի որ քահանաները նվիրված ծառայում էին և այլ աշխատանքով չէին զբաղվում (Փիլիպ. 4:10-20):

Այդ սովորությունն առ այսօր պահպանվում է: Հոգևորականներն ամեն օր՝ առավոտյան և երեկոյան, յուրաքանչյուր ժամերգության, ինչպես նաև տարբեր եկեղեցական արարողությունների ընթացքում աղոթում են մարդկանց, նաև ննջեցյալների հոգիների, երկրի բարօրության և խաղաղության համար՝ քարոզների և զանազան հանդիպումների միջոցով հոգևոր սնունդ տալով բոլորին: Իսկ մարդիկ գրեթե չեն մտածում եկեղեցուն կամ հոգևորականին որևէ հարցով աջակցելու մասին՝ կարծելով, թե դա մեծահարուստների պարտականությունն է: Մասնակցելով որևէ եկեղեցական արարողության՝ մարդիկ առիթ են ունենում մի փոքր գումար նվիրաբերելու հոգևորականին կամ եկեղեցուն, որին երբեմն հաջորդում են քննադատությունը, բամբասանքը և պոռոտախոսությունը: Հայտնի է, որ մարդիկ արարողությունների ժամանակ շքեղությունն ապահովելու համար մեծ գումարներ են ծախսում զանազան բաների վրա (օրինակ՝ լիմուզին, թամադա, երգիչ, որոնք հաճախ ցածրակարգ են, սակայն բարձր վարձատրություն են պահանջում) և երբևէ չեն տրտնջում: Բացի այդ՝ յուրաքանչյուր հոգևորականի ընդգրկված է բարեգործական բազմաթիվ ծրագրերում. հաճախ հոգևորականներին նվիրաբերած գումարներն օգտագործվում են այդ ծրագրերի շրջանակներում:

– Հին Ուխտում Աստված մարդուն պատվիրել է սննդի մեջ օգտագործել որոշ կենդանիների միսը, իսկ խոզի միսը չուտել: Ինչպե՞ս եղավ, որ քրիստոնյաները չեն հրաժարվում դրանից:

«Եվ Հիսուս, իր մոտ կանչելով ժողովրդին, ասաց. «Լսեցե՛ք և իմացե՛ք, ոչ թե ինչ որ բերանով է մտնում, այն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. 15:10-11): Այսինքն՝ շնություն անելը, հայհոյելը, բամբասելը, նախանձելը և այլն պղծում են մարդուն: Հետևաբար, միս ուտելը չուտելը ոչ արդիական խնդիր է, քանի որ Քրիստոսով մարդը դուրս եկավ օրենքի իշխանությունից և մտավ շնորհի տակ:

– Աստվածաշնչում գրված չէ Հիսուս Քրիստոսի կյանքի մասին՝ 13 տարեկանից մինչև մկրտությունը: Ինչպիսի՞ն է Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումը:

Քրիստոսի կյանքի մասին՝ 13-30 տարեկանը, շատ քիչ տեղեկություններ են հայտնի: Թեև կան պարականոն գրքեր, որոնցում նկարագրված է Նրա կյանքի այդ շրջանը, սակայն Եկեղեցու կողմից այդ գրքերը չեն ընդունվել: Եկեղեցին ընդունել է այն տեսակետը, որ Հիսուս Քրիստոս այդ տարիներին ապրել է սովորական մարդու կյանքով, օգնել ընտանիքին, աշխատել որպես հյուսն և որևէ բանով աչքի չի ընկել: Ըստ ավետարանիչների՝ Նա Իր քարոզչությունն սկսել է 30 տարեկանում՝ մկրտությունից հետո, իսկ առաջին հրաշքը կատարել է Գալիլիայի Կանա քաղաքում՝ հարսանիքի ժամանակ ջուրը գինու վերածելով (Հովհ. 2:1-11): Ավետարանիչները չեն անդրադարձել Նրա պատանեկության տարիներին, քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու և փրկչական առաքելության բոլոր խորհուրդները կատարվել են կյանքի վերջին 3 տարիների ընթացքում, որոնք էլ կարևոր ու հիմնական են քրիստոնեության համար:

**Տոնացույց**

Նոյեմբերի 18 - Բարեկենդան
Հիսնակաց պահքի
Նոյեմբերի 21 - Տոն Սուրբ
Աստվածածնի ընծայման

### *Տոն Հիսնակաց պահքի*

Հիսնակ նշանակում է հիսուն օրերի ժամանակաշրջան: Հնում հիսնակաց պահեցողությունն սկսվել է Քրիստոսի ծնունդից հիսուն օր առաջ և պահվել մինչև Աստվածահայտնության տոնը: Ներկայումս հիսնակաց պահքը պահվում է միայն հինգ օր:

### *Ընծայումն սուրբ Աստվածածնի*

Սա երեքամյա Մարիամին՝ իբրև ուխտի զավակի, իր Հովակիմ և Աննա ծնողների կողմից տաճարին ընծայելու հիշատակության տոնն է: Սկզբնապես հայ եկեղեցին չի ունեցել ընծայման կամ նվիրման տոն, բայց սկսած 16-17-րդ դարերից, հետևելով հույն և լատին եկեղեցիների ավանդույթին՝ մտցրել է տոնացույց և նշում է նոյեմբերին:

## Ինչու՞ է Աստված նախ երկրային կյանքը շնորհում...

Աստծո բոլոր գործերը բարի են և մեզ համար օգտաշահ, թեև երբեմն անտարբեր ենք Նրա խորհուրդների հանդեպ՝ տկար տեսողության պատճառով: Ինչպես որ նավի ղեկն է ջրում բեկված երևում՝ իրականում բեկված չլինելով, այնպես էլ երկրային և երկնային կյանքերի հաջորդումն է հիմնավորված տարբեր պատճառներով:

Նախ՝ երկնային կյանքն անապական է և անմահ, իսկ մարդը՝ մահկանացու և ապականված, ուստի պատշաճ չէ, որ մեղսավորն անապական վայրում բնակվի, մինչև որ կատարյալ ու անապական չդառնա:

Այն աշխարհն անմարմինների բնակվելու վայրն է. մարմնավոր մարդը չի կարող բնակվել այնտեղ. նախ պետք է բնակվի հոգով, ապա միայն մարմնանա:

Մարդու բնույթը երկակի է՝ հոգի և մարմին. կա երկու աշխարհ՝ երկինք և երկիր: Արդ, նախ մարմնի համար տվեց երկիրը, ապա հոգու համար՝ երկինքը, որովհետև նախ մարմինն է, հետո հոգին՝ ոչ թե ըստ ժամանակի և պատվի, այլ ըստ նյութի և զորության:

Սկզբում երկրային կյանքին արժանացրեց, քանզի այն փոփոխական է, անցավոր, այնինչ երկնային կյանքն անփոփոխ է, հավիտենական...

Անհրաժեշտ է մարդկանց ժամանակավոր աճ, որպեսզի վախճանի օրը ընտրյալները մուտք գործեն երկնային արքայություն, քանզի այնտեղ հավիտյան է, ոչ թե ժամանակավոր. չկա ժամանակ, չկա ծնունդ, ուստի և՝ բազմացում, որովհետև միակ ավելի առաջնային է, քան բազումը: Երկրում բազմանալով՝ հետո միասին կհաստատվեն Տիրոջ արքայության մեջ՝ որպես հրեշտակների բազմություն:

Այս աշխարհը մարտի հանդես է, այն աշխարհը՝ պսակի հաղթանակ: Արդ, ըստ կարգի՝ սերմն ավելի նախնական է, քան պտուղը, արդյունքը, այսինքն՝ նահատակները, հետո պսակը, որ նրանք, ովքեր այստեղ փորձվում են, այնտեղ կյանքի պսակին արժանանան:

Եթե մեղանչած լինեինք երկնքում, ապա անհնար կլիներ բժշկվելը, ինչպես դևերը: Հետևաբար՝ երկրում մեղանչելով՝ ապաշխարելուց հետո կվայելենք խոստացված կյանքը:

Խոստացված երկնային արքայությունն ուշացավ, որպեսզի փափագն ավելանա: Սկզբում այս տառապալից և անկատար կյանքը շնորհեց, որ անցավոր կյանքից հետո գնահատենք հավիտենական կյանքի պատիվն ու մեծությունը:

Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»
գրքից փոխադրեց
ԽՈՐԵՆ ՍԱՆՈՒԿՅԱՆԸ

## ԲԱՐԵՊԱՇՏ ՔՐԻՍՏՈՆՅԱ

# ՄԱՏՈՒԱՂԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ԿԱՊԱՐԱԳԸ

Մատաղի կարգը սահմանել է Ս. Գր. Լուսավորիչը դեռևս 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց անմիջապես հետո: Ըստ Տաթևացու՝ «մատաղ» նշանակում է մատուցել աղ: Կրոնական արարողությամբ մատաղի կենդանին մորթվում է և եփվելուց հետո բաժանվում աղքատներին:

Մատաղը նախ ընծա է Աստծուն: Երկրորդ՝ փրկության հույս է: Երրորդ՝ աղքատասիրություն է և ողորմություն: Չորրորդ՝ ննջեցյալների հիշատակ, ապա մեր երախտագիտությունն է Աստծուն՝ հիվանդությունից ու փորձություններից ազատելու համար:

Մատաղի նյութերն են կենդանին և աղը: Մատաղի կենդանին կարող է լինել արջառ, խոյ, աքաղաղ, աղավնի: Ընդունված կարգ է մատաղ անել միայն արու կենդանիների:

Քանի որ մատաղն Աստծուն մատուցվող ընծա է, ապա մատաղացու կենդանին պետք է արդար վաստակի արդյունք լինի, ընտիր և լավագույնը: Խեղանդամված և արատավոր կենդանուն չի կարելի մատաղ անել, քանզի Աստծուն ընծայվելիքը՝ նյութական թե հոգևոր, պետք է լինի անարատ և մաքուր:

Նշենք, որ մատաղը չի կատարվում մատաղացուի արյունով մեղքերից թողություն ստանալու ակնկալիքով, ինչպես փորձում են ներկայացնել նորահայտ աղանդավորները՝ շփոթության մեջ գցելով անտեղյակ մարդկանց: Մատաղ է, և ընդունելի մատաղ, ցանկացած ընծայաբերում՝ հացեղեն, ուտեստներ, հագուստ, շինություն, դրամական նվիրատվություն և այլ բարեգործություններ:

Եկեղեցում նախ պետք է օրհնել մատաղի աղը, որից հետո այն պետք է տալ կենդանուն «ի կերակուր», այնուհետև միայն կարելի է մորթել: Աղի

Նկ. Սալվադոր Դալիի

օրհնության կարգը սահմանել է մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետը: Աղը մաքրության օրինակ է, ինչպես որ Քրիստոս ասաց իր աշակերտներին. «Դուք եք երկրի աղը»: Եվ որովհետև երկիրը և բոլոր կերակուրներն Ադամի մեղսագործության պատճառով անեծքի տակ ընկան, այս է պատճառը, որ օրհնելով մաքրում ենք աղը, իսկ աղն ուտելով՝ մաքրվում է նաև կենդանին: Աղի օրհնությունը կատարվում է նաև նրա համար, որպեսզի մատաղացու կենդանին տարբերվի «կուռքերին մատուցվող զոհերից»:

Սակայն քրիստոնեական իմաստով մատաղի արարողության ակունքները գալիս են դեռ առաջին դարից, երբ բոլոր քրիստոնյաները սուրբ պատարագից հետո հավաքվում էին միասին՝ «սիրո ճաշի»՝ մատաղի, որն ամբողջությամբ մատուցվում էր հիվանդներին ու աղքատներին՝ ըստ ավետարանական խոսքի. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին և ո՛չ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելություն անես, կանչի՛ր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը» (Ղուկաս 14:12-14):

Մատաղ չի կարելի անել չորեքշաբթի, ուրբաթ օրերին, շաբաթապահերին և Մեծ պահքի շրջանում:

Արգելվում է մատաղացու կենդանուն եկեղեցի մտցնել, որովհետև «եկեղեցին դրախտի խորհուրդն ունի, որտեղ անասուն չի մտնում» (Տաթևացի): Երբեմն մարդիկ, չհասկանալով մատաղի իմաստը և նշանակությունը, մատաղացու կենդանու արյունը քսում են տան դռներին կամ իրենց ճակատին ու ձեռքերին, որը հեթանոսական է և քրիստոնեական իմաստից զուրկ:

Մատաղի միսը չի կարելի պահել տանն իբրև ուտելիք, այլ նույն օրը պետք է բաշխել աղքատներին:

Մատաղի կենդանուն պետք է մորթի տղամարդ՝ աշխարհական կամ հավատացյալ: Կին, մանուկ կամ հոգևորական որևէ մեկը չպետք է մորթեն: Մատաղացու կենդանու փորոտիքը, գլուխը և մյուս մնացորդները պետք է թաղել, որպեսզի շների ու կատուների կեր չդառնան, քանզի այն օրհնված է:

Այսպիսով՝ մատաղը խորապես մարդասիրական մի արարողություն է, որը հնարավորություն է տալիս հավատացյալին ցուցաբերելու ողորմածություն և օգնելու աղքատներին ու կորուսյալներին:

Գեղաշնորհ Տեր Սեպուհ եպս.
Չուլջյանի օրհնությամբ տպագրված
«Քրիստոնեական» գրքից

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱԶԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՇԽԱՐՀԸ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Աշխարհում և մեր հայրենիքում այսօր բազմաթիվ խնդիրներ կան, և երբեմն մոռանում ենք, որ մերօրյա խնդիրներով, դժվարություններով կարող են մտահոգված լինել ոչ միայն ավագները, այլև պատանիները, երիտասարդները: Մինչդեռ նրանց ևս հետաքրքրում են այն գործընթացները, փոփոխությունները, որ կատարվում են իրենց շուրջը:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Վանաձորի թիվ 4 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների անկեղծ մտահոգությունները ժամանակակից երիտասարդության հանդեպ ավագ սերնդի վերաբերմունքի մասին, օրինապահ լինելու պատանեկան պատկերացումները:

### Ավագների ոգևորության կարիքն ունենք

Դեռևս պահպանվում է այն կարծիքը, որ այժմյան երիտասարդությունը խիստ տարբերվում է մեր ծնողների կամ տատիկների ապրած տարիների երիտասարդությունից:

Իմ կարծիքով՝ այդպիսի պատկերացումը սխալ է: Քննադատելու փոխարեն ավելի լավ է համեմատել նրանց և մեր ժամանակները: Լինելով մեր ժամանակի երիտասարդներից՝ կարծում եմ, որ փոփոխությունները դրական են: Ավագ սերունդը կարծում է, որ մենք չգիտենք հարգել, կարեկցել, սիրել, խելացի լինել կամ պարզապես լինել լավ մարդ: Մինչդեռ մենք կարող ենք լինել այդպիսին և այդպիսին ենք. պարզապես ավագների ոգևորության կարիքն ունենք:

Ուստի խնդրում ենք ժպտալ մեզ, ոգևորել. կիսամոզվեք, որ սպասվածից էլ լավն ենք: Կոչ եմ անում բոլոր պատանիներին, երիտասարդներին. եկեք ապացուցենք ավագներին, որ կարելի է հույս դնել մեզ վրա, չէ՞ որ իրենք մի գեղեցիկ օր հպարտանալու են մեզանով:

Մենուա Մադոյան

### Մարդիկ, դարձե՛ք օրինապահ

Ասում են՝ օրինապահ ազգ ենք, օրինապահությունը մեր օջախների հիմքն է: Ասում են՝ բարի ենք, մարդկային: Ասում են… Ապրում ենք՝ անտարբեր լինելով շրջապատի նկատմամբ, իսկ մեր շուրջը ոչ միայն բազմաթիվ քաղցած մարդիկ կան, ովքեր մեր աջակցության կարիքն ունեն, այլև կենդանիներ: Հսկայական գումարներ ենք վատնում խաղատներում, այնինչ կարելի է կենդանիների համար արգելոցներ կառուցել. չէ՞ որ բոլորս էլ Աստծո արարած էակներն ենք: «Փակում ենք» մեր աչքերն ու ականջները, որ չտեսնենք ու չլսենք, թե ինչպես են անխնա ու անխղճորեն ոչնչացնում կենդանիներին: Անտարբեր վերաբերմունքով ակամա դառնում ենք «հանցավորների հանցակիցը»:

Կանգ առեք, մարդի՛կ:

Սթափվեք, մի՛ եղեք այդքան դաժան, դարձե՛ք օրինապահ, հարգե՛ք կենդանի արարածին. չէ՞ որ աշխարհն ու մարդիկ ամենևին էլ դաժան չեն:

Լուսինե Բաղիրյան

### Խոշոր նվիրատվություն Մարդու իրավունքների գրադարանին

Հարգելի՛ ընթերցողներ

ՀՍԻԿ Մարդու իրավունքների գրադարանային ցանցը (ՄԻԳՑ) համալրվել է մեծաքանակ գրականությամբ:

ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության հայաստանյան գրասենյակը ՄԻԳՑ-ին է նվիրաբերել ավելի քան 560 կտոր արժեքավոր գրականություն: Գրականությունը ներառում է ՄԱԿ-ի քարտուղարության կողմից գրանցված միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ժողովածուի 543 հատոր, ինչպես նաև Հազարամյակի զարգացման նպատակների վերաբերյալ գրականություն՝ անգլերեն և հայերեն:

Քանի որ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ժողովածուն եզակի օրինակ է և դուրս չի տրվում, ընթերցողները կարող են ժողովածուից օգտվել Վանաձորի Մարդու իրավունքների գրադարանի ընթերցասրահում:

ՎԱՐՍԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Մարդու իրավունքների գրադարանային ցանցի համակարգող

### Հայտարարություն

Հարգելի՛ ընթերցողներ, հայտնում ենք ձեզ, որ տպագրության է պատրաստվում «Վասն արդարութեան» գիտամեթոդական հանդեսի հերթական համարը:

Հրավիրում ենք իրավաբանական ֆակուլտետների, բուհերի գիտնականներին, դասախոսներին, բարձր կուրսերի ուսանողներին իրավունքի, մարդու իրավունքներին առնչվող թեմաներով գիտական, վերլուծական հոդվածներ ներկայացնել: Գիտականության չափանիշներին համապատասխանող հոդվածները, աշխատանքները կտպագրվեն հանդեսում՝ պարգևատրվելով հոնորարներով:

Հոդվածները կարելի է ուղարկել «Վասն արդարութեան» գիտամեթոդական հանդեսի խմբագրությանը հետևյալ հասցեով՝

ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

### Մենք՝ քաղաքացիական հասարակությունը

Հարգելի՛ հասարակական կազմակերպություններ,

«Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը «Մենք՝ քաղաքացիական հասարակությունը» խորագրի ներքո պարբերաբար ներկայացնում է Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններին:

Եթե ցանկանում եք՝ ձեր կազմակերպությունը ներկայացվի «Իրավական մշակույթ» թերթում, ապա խնդրում ենք ուղարկել անսխալ խմբագրված տեղեկույթ ձեր հասարակական կազմակերպության, նրա առաքելության, ռախատեսվող և իրականացված ծրագրերի, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասին:

Տեղեկույթը պետք է լինի էլեկտրոնային տարբերակով, 1-1,5 A4 էջի սահմաններում՝ Arial Armenian 10 տառաչափով: Ուղարկեցեք նաև 1-2 լուսանկար 300 dpi խտությամբ:

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եթե Դուք ցանկանում եք պարբերաբար անվճար ստանալ «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթը, խնդրում ենք լրացնել սույն կտրոն-ձևաթուղթը և ուղարկել խմբագրություն

Բաժանորդ _____
ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆ կամ կազմակերպության ԱՆՎԱՆՈՒՄԸ

Հասցե _____
Մարզ, քաղաք (գյուղ), շենք (տուն), բնակարան

Հեռախոսահամար _____

էլ. փոստ _____

Բաժանորդագրվել կարելի է նաև էլ. փոստով տեղեկացմամբ՝ lc@acrpc.am, ինչպես նաև՝ զանգահարելով (0322) 2 29 67 և (0322) 4 47 81

Հարգելի՛ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզնից ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացա՞ծ է իրավական մշակույթը:
Ոչ Մասամբ Այո

2. Հասարակությունն իրազե՞կ է իր իրավունքներին:
Ոչ Մասամբ Այո

3. Թերթը խրախուսո՞ւմ է մարդու իրավունքների պաշտպանությունը:
Չի խրախուսում Մասամբ Խրախուսում է

4. Թերթն արծարծո՞ւմ է հասարակությանը հուզող հարցեր:
Ոչ Մասամբ Այո

5. Ի՞նչ թեմաների շուրջ հոդվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:
_____
_____
_____

Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝
անուն, ազգանուն _____ հասցե _____
հեռախոս _____ էլ. փոստ _____

Սիրելի՛ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ. փոստով՝ lc@acrpc.am կամ հեռապատճենով՝ +374 (322) 4 47 81:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Գ տարի
**Հիմնադիր և հրատարակիչ՝**
**Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն**
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am

**Գլխավոր խմբագրի պաշտոնակատար՝** Գևորգ Մանուկյան
**Խմբագիր՝ Հերմինե Բաբուռյան**
**Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան**
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրապարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

**Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:**
**Ստորագրված է տպագրության 2007թ.11.28:**
**Տպաքանակը՝ 2000:**
**Տպագրվել է «Շանգակ-97» հրատարակչատանը:**

**Իրավական մշակույթ**
**Legal Culture**
***Правовая культура***
**Տարածվում է անվճար**